ԳՐԻԳՈՐ ՏԵՐ-ՄԵԼՔԻՍԵԴԵԿՅԱՆԻ ՆԱՐՈԴՆԻԿԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Հ. ՂԵԼՈՆԴՅԱՆ

XIX դարի 70—80-ական թթ. հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Գրիգոր Տեր-Մելքիսեդեկյանը։

Տեր-Մելքիսեդեկյանը (1848—1882) ծնվել է Շուլավերում, քահանայի ընտանիքում։ Վաղ հասակում զրկվելով ծնողներից, նա մնացել է մեծ եղբոր խնամքին։ Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում։ Պատանեկան տարիներին արդեն, նա, ինչպես հիշում են իր ընկերները, երազում էր պայքարել տերտերների, աղաների, մելիքների դեմ[1]։

1862 թ. Գրիգորն ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ուր և դրսևորվում են նրա փայլուն ընդունակությունները, հատկապես լեզուների յուրացման բնագավառում (տիրապետում է ֆրանսերենին և ռուսերենին)։ Ժամանակակիցների վկայությամբ նա շատ էր կարդում, հատկապես անլեզալ գրականություն. «Նրա պատանի գլխում պտտվում էին Նազարյանի, Գերցենի, Նալբանդյանի գաղափարները»[2]։

Գ. Մելքիսեդեկյանը դառնում է Ներսիսյանցիների խռովության կազմակերպիչներից մեկը, որի համար հեռացվում է դպրոցից։

Չնայած բազմաթիվ խոչընդոտներին, Տեր-Մելքիսեդեկյանը 1868 թ. այնուամենայնիվ ավարտում է Ներսիսյան դպրոցը, իսկ 1870 թ. էքստերն քննություն է հանձնում նաև Թիֆլիսի արքունական գիմնազիայում և ստանում ատեստատ[3]։ Նույն թվականին էլ, ոգեշնչված «դեպի ժողովուրդը» նարոդնիկական կոչով, մեկնում է գյուղ և որպես ուսուցիչ աշխատում է Ելիզավետպոլի նահանգի Փիբ, Բանանց, Խաչկապ ու այլ գյուղերում, իսկ 1876—1879 թթ.՝ Շուլավերում։ Կյանքի վերջին տարիներին ապրում էր Թիֆլիսում, որտեղ հրատարակում էր «Աշխատանք» շաբաթաթերթը։

Տեր-Մելքիսեդեկյանը թողել է ուշագրավ գրական ժառանգություն։ Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նրա հրապարակախոսական գործերը։ 1874 թ. Թիֆլիսում տպագրվել է «Մի համառոտ հայացք XIX դարի հայ հոգևորականության վրա» բրոշյուրը։ 1876 թ. Գանձակում հրապարակվում է «Ազգային հարցի մասին» հոդվածը, որը Ելիզավետպոլի նահանգի Թարգմանչաց վանքի գավթում նրա արտասանած ճառն էր։ 1878 թ. տպագրվել է «Մեր Կովկասի հիմիկվա լրագրերը» կամ «Թռչող միտք» քննադատական գրքույկը երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն։ Գ. Մելքիսեդեկյանի քաղաքական կրեդոն շարադրված է «Նվեր քյասիբ գեղջցիներին» հրապարակային դասախոսության մեջ, որն առանձին գրքույկով

---

1 Տե՛ս Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Վ. Միրաքյանի ֆոնդ, գ. 180, էջ 28—29։

2 Նույն տեղում, էջ 33։

3 Նույն տեղում, էջ 52։

լույս տեսավ 1879 թ. Թիֆլիսում։ 1879—1882 թթ. նա հրատարակում էր երկլեզվյան «Աշխատանք—Труд» գրական-քաղաքական շաբաթաթերթը[4]։ Միաժամանակ թղթակցել է «Кавказ», «Обзор», «Մեղու Հայաստանի» թերթերին և «Արարատ» ամսագրին, զբաղվել թարգմանությամբ, գրել Ժան Ժակ Ռուսսոյի, Ի. Դ. Պեստալոցիի մանկավարժական հայացքների մասին։

Գ. Տեր-Մելքիսեդեկյանի կյանքը և հասարակական-քաղաքական գործունեությունը դեռևս չեն դարձել հատուկ ուսումնասիրության առարկա, բայց տարբեր առիթներով պատմատնտեսագիտական և գրականագիտական որոշ աշխատություններում խոսվել է նրա մասին, իրարամերժ կարծիքներ են հայտնվել նրա աշխարհայացքի վերաբերյալ[5]։

Ս. Զուրաբյանը Գ. Տեր-Մելքիսեդեկյանին համարել է հասարակական-տնտեսագիտական մտքի դեմոկրատական ուղղության ներկայացուցիչ և Մ. Նալբանդյանի հետևորդ[6], Կ. Դանիելյանը նրան բնութագրել է իբրև նարոդնիկ-լուսավորիչ, իսկ «Նվեր քյասիբ գեղջիներին» գրքույկը համարել է «մատենախոսություն, որը լավագույնս ներկայացնում է 70-ական թվականների կովկասահայ նարոդնիկության գաղափարական կողմնորոշումների ու տընտեսական ծրագրերի բնույթը»[7]։ Վ. Ավետիսյանը մերժում է Տեր-Մելքիսեդեկյանին տրված վերոհիշյալ գնահատականը. «Գ. Տեր-Մելքիսեդեկյանը ոչ թե անցնում է «աշխատավորական դասակարգային դիրքերի պաշտպանությանը», այլ ըստ էության կապիտալիստական շահագործողների դիրքերի պաշտպանությանը։ Եվ ոչ մի հիմք չկա նրան դեմոկրատ, առավել ևս հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանի հետևորդ հայտարարելու»[8]։

Գ. Տեր-Մելքիսեդեկյանի գաղափարական դիմագծի ճիշտ բնորոշման համար հետաքրքիր տեղեկություններ են հայտնում նրա ընկերներն ու աշակերտները։ Այդ հուշերը հավաքել, խնամքով գրի է առել Մելքիսեդեկյանի երախտագետ սան, բանաստեղծ Վահան Միրաքյանը[9]։ Տեր-Մելքիսեդեկյանի ընկերներից Նիկողայոս Մատինյանը գրել է. «Գրիգորը եղակի մարդ էր այն ժամանակ։ Ծայրահեղ դեմոկրատ էր, պայքարող, չուներ իր շրջանը, մենակ էր աշխատում, հրատարակում էր հայերեն, ռուսերեն շաբաթաթերթ «Աշխատանք—Труд» անունով, որը դժվարությամբ էր լույս ընծայում չքավորության պատճառով... նրա թերթը նվիրված էր շահագործվող բանվորների, գյուղացիների կարիքներին, քաղաքական և դպրոցական հարցերին։

---

4 «Աշխատանք—Труд» շաբաթաթերթի բոլոր համարները (բացի № 6-ից) վերջերս հայտնաբերվել են լենինգրադում, Սալտիկով-Շեդրինի անվան գրադարանում։

5 Տե՛ս Գ. Ղարաջյան, Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918։ Վ. Միրաքյան, Հուշեր Տեր-Մելքիսեդեկյանի կյանքի և գործունեության մասին, գրված 1934—1938 թթ. (ԳԱԹ, Վ. Միրաքյանի ֆոնդ, գ. 180—183)։ Մ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում, Երևան, 1940։ Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժման պատմությունից, Երևան, 1958։ Ս. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծերը, Երևան, 1959։ Կ. Դանիելյան, Հայ գյուղագրությունը XIX դարում, Երևան, 1973։ Վ. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976։

6 Ս. Զուրաբյան, նշվ. աշխ., էջ 392—405։

7 Կ. Դանիելյան, նշվ. աշխ., էջ 127։

8 Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 138։

9 Տե՛ս ԳԱԹ, Վ. Միրաքյանի ֆոնդ, գ. 180 և 183։

Բողոքող և մարտնչող աննկուն ոգի ուներ. Գրիգորը ծանոթ է եղել Պ. Ա. Կրոպոտկինի հետ, ունեցել է նամակագրություն»[10]։

Մելքիսեդեկյանի մյուս ընկերը՝ Արշակ Նասիրյանը, վկայում է, որ նա կարդում էր գրքեր ֆրանսիական հեղափոխության, Փարիզի Կոմունայի մասին, Դիդրո, Դալամբեր, Պրուդոն[11]։ Գրիգոր Զորանյանը գրել է. «Այդ մարդը իսկական սոցիալիստ է»[12]։ Վ. Միրաքյանի վկայությամբ Տեր-Մելքիսեդեկյանի դեմ կազմակերպված հալածանքը ընդունել է ծայրահեղ չափեր, «որովհետև նա պայքարում էր շահագործողների դեմ՝ պաշտպանելով աշխատավոր մարդկանց։ Նա ստանում էր հեղափոխական թռուցիկներ, որոնք կարդում էր ծածուկ, մոտիկ աշակերտների հետ՝ հեղափոխական մտքեր տարածելով երիտասարդության մեջ։ Նրա աշխարհայացքը զուտ հեղափոխական է։ Նա հավատում և հետևում էր Նալբանդյանին»[13]։

Ինչպես նշվեց, Տեր-Մելքիսեդեկյանը, արձագանքելով «դեպի ժողովուրդը» ռուս նարոդնիկների կոչին, 1870 թ. մեկնել է գյուղ, «մղվել անօգնական գյուղական դասը»։

Իհարկե, տարատեսակ էին 70-ական թթ. դեպի ժողովուրդը գնացող մրտավորականության ծրագրերն ու ակնկալությունները։ Գյուղ գնացողների մեջ կային մարդիկ, որոնք հուսախաբվում և հեռանում էին ասպարեզից։ Իսկ մի մասը գյուղում ծավալում էր միայն խաղաղ կուլտ-լուսավորական աշխատանք։ Սակայն նրանց մեջ կային նաև հեղափոխական տրամադրություն ունեցող մարդիկ, որոնք կապվում էին գյուղի հետ, անձնազոհ պայքարում նրա փրկության համար։ Արխիվային նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Գ. Տեր-Մելքիսեդեկյանը իր երեք աշակերտների՝ Աստատուր Նալբանդյանի, Անաստաս Արզումանյանի և Թովմաս Կոնջոսյանի հետ շահագործողների դեմ «գյուղացու փակ աչքերը բանալու» նպատակով եղել է Անդրբկովկասի մի շարք գյուղերում։ Ռուսական Պրիվոլնոյե գյուղում նա մնացել է երկու ամիս[14]։ Գյուղացու նկատմամբ ունեցած կարեկցանքը և ժողովրդասիրությունը նարոդնիկության բնորոշ գիծն է։ Տեր-Մելքիսեդեկյանը նույնպես կարեկցանքով էր լցված դեպի ընչազուրկ գյուղացիները, նրանց երեխաները ձրի կրթություն էին ստանում Մելքիսեդեկյանի մոտ։ Իր ստացած ողջ աշխատավարձը նա ծախսում էր չքավոր գյուղացիների երեխաների կարիքները հոգալու համար։ «Ուսումնարանի բոլոր արդյունքը մսխելով խեղճ գյուղացիների որդոց կոշիկների և գրքերի վրա, ես հագիվ ապրում էի խնդրագրություններով ու բողոքագրություններով»,— գրում էր նա[15]։

Ժամանակակիցները տվել են Տեր-Մելքիսեդեկյանի պրոպագանդիստական աշխատանքի պատկերը. «Նա չէր սպասում, որ ռանչպարը կամ արհեստավորը, գյուղացիք գան իր մոտ, ինքն էր նետվում նրանց մեջ։ Ճարտասանի լեզու ուներ, խոսելիս կրակ էր կորում։ Զրույցը ավարտելուց՝ հետո պ. Գրիգորը երգում էր խիստ սրտառուչ «Ագատն աստված» արգելված բանաստեղծությունը, իրեն երկրպագուն Միր. Նալբանդյանի»[16]։

10 Նույն տեղում, գ. 183, էջ 169։
11 Տե՛ս նույն տեղում, էջ 225—230։
12 Նույն տեղում։
13 Նույն տեղում, էջ 118։
14 Նույն տեղում, գ. 180։
15 Դ. Տեր-Մելքիսեդեկյան, Նվեր քյասիր գեղջիներին, Թիֆլիս, 1879, էջ 2—3։
16 ԴԱԲ, Վ. Միրաքյանի ֆոնդ, գ. 180, էջ 61։

Տեր-Մելքիսեդեկյանը ժողովրդի բարեկեցության կարևոր ուղին համարում էր երկրագործությունը, հողն ու համայնքը։ «Ժողովրդի մեջ կյանքը հանգած չէ, եթե ունի հողային արդյունաբերություն և մշակված արդյունաբերություն»,— գրում էր նա[17]։ Գյուղական-համայնական կյանքի մեջ էր նա տեսնում գյուղացու բարօրության երաշխիքը։ Պրոպագանդելով համայնական կյանքի առավելությունները և ցույց տալով կապիտալիզմի կործանիչ դերը գյուղացու կյանքում, նա գրում էր. «Մաներից ցցենք մեր մասնավոր անբավականությունը, մեր մասնավոր շահերը և սերտ կերպով միանանք ընդհանուրի (բոլորի) շահը առաջ տանելուն աննախանձ կերպով»[18]։ Ժխտելով սեփականությունը, նա հավատում էր գալիք լուսավոր ապագային. «Կգա ժամանակ փող գոյություն չի ունենա, աշխատանքը կհամայնանա, կմիաւեղվեն քաղաքային և գյուղական ամբարները, որտեղից կստանան իրենց պարենը, իմ ու քո չի լինի։ Ուսումը կլինի ամենքի համար պարտադիր, աշխատանքը կլինի ութժամյա»[19]։

Տեր-Մելքիսեդեկյանը գտնում էր, որ միայն ընդհանուր երջանկությունը կարող է ուրախություն բերել անհատին։

Եթե ռուս նարոդնիկները աղդարարում էին, թե կապիտալիզմը ռեգրես է, չարիք գյուղացու կյանքում, ապա Մելքիսեդեկյանը, ոգևորված այդ գաղափարներով, մերկացնում էր կապիտալիզմի կատարած ավերածությունները, ցույց տալով գյուղացու աղքատացումը, դրամի ավերիչ դերը, խարազանում գյուղական ցեցերին։ Նրա խոսքի ներգործության մասին ահա ինչ են գրում ժամանակակիցները. «Գրիգորին լսելիս աշխատավոր գյուղացիք ասում էին. «Խալխի մեջ մեծ ուժ կա, նա մի օր պետք է իր զոռը նշանց տա, պետք է գեղակեր ցեցերի կապը քաշելու համար մի խոսքի կանգնենք ու պահանջենք, ինչ պրիստավ, ինչ դիվանաբեկ...»[20]։

Հետևելով ռուս հեղափոխական նարոդնիկական շարժման ավանդույթներին, Տեր-Մելքիսեդեկյանը իր հրապարակախոսությամբ ոչ միայն վեր է հանել կապիտալիզմի բացասական կողմերը, դրամի ավերիչ դերը գյուղացու կյանքում, տվել գյուղական ցեցերի ճշմարտացի պատկերը, այլև ցույց է տվել նրանց դեմ ուղղված պայքարի անհրաժեշտությունը։ Նրան թվում էր, թե մերկացնելով գյուղական վաշխառուներին, կուլակներին, հոգևորականությանը, հնարավոր է կանխել կուլակության առաջացման պրոցեսը մտավորականության, նրա փրկարար առաքելության շնորհիվ։ Տեր-Մելքիսեդեկյանի այդ բաղձանքները դրսևորվել են նրա «Նվեր քյասիբ գեղջիներին» գրքույկում, որը գրված է լավրովյան պրոպագանդիստական կոչի ոգով։ Այդ կոչն ուղղված էր գյուղ մեկնող նարոդնիկներին 1874 թ. և կրում էր «Ինչի մասին և ինչպես պետք է հեղափոխական պրոպագանդիստը խոսի ժողովրդի հետ» խորագիրը։ Այնտեղ մասնավորապես ասված է. «Դուք ժողովրդի մեջ եք։ Ձեզ լսում են և հավատում, դուք կամենում եք խախտել ժողովրդի անվստահությունը իր ուժերի նկատմամբ, կամենում եք բացատրել նրա տառապանքների բուն իմաստը, որը նա կրում է և զգում, սակայն որը չի հասկանում։ Դուք կամենում եք ցույց տալ նրա իսկական թշնամիներին, չարիքի իսկական պատ-

17 «Աշխատանք—Труд», 1880, № 5։
18 Գ. Տեր-Մելքիսեդեկյան, Նվեր քյասիբ գեղջիներին, էջ 44—45։
19 ԳԱԹ, Վ. Միրաքյանի ֆոնդ, գ. 183, էջ 121։
20 Նույն տեղում, էջ 17։

ճառը... Ինչի մասին և ինչպես պետք է դուք նրան այդ ասեք։ Դուք ցույց տվեք այն հիվանդությունները, որոնք կործանում են նրան։ Ցույց տվեք նրա գավակների մահացությունը, նրա կյանքի տևողության բռնի կրճատումը, նրա ուժասպառումը, նրան սպառնացող վերասերումը։ Դուք բացատրեք նրան, որ այդ չարիքը նրան բնության օրենքը չէ ուղարկել, որ նրա կողքի հարուստները հաղվադեպ են հիվանդանում, որ նրանց երեխաները ավելի երկար են ապրում, որ նրանց կյանքի միջին տևողությունը ավելի երկար է, որ նրանց սերունդն ունի լավ ապագա, որ այդ չարիքը ծնող պատճառները ընկած են հասարակական պարագաների մեջ, հասարակական պայմաններում և հասարակական անարդարությունների մեջ»[21]։

Տեր-Մելքիսեդեկյանը իր գրքույկում առաջնորդվում էր նարոդնիկության վերոհիշյալ տեսությամբ և ցույց տալիս, որ գյուղացու ուժասպառության և նրա գավակների մահացության պատճառները թաքնված են նրա տնտեսական անզորության մեջ[22]։ Գյուղացիներին հասկանալի լեզվով հեղինակը մերկացրել է նրանց ծանր վիճակը, միաժամանակ նշելով, որ «մի սիրուն օր, երբ ձեր որդկերանց աչքն էլ իմ աչքի պես կբացվեն ու կտեսնեն քյասիբ գեղջիների լուռ ու թաքուն քյասիբությունն ու ցավերը, էն վախտն նրանք էլ կցավեն քյասիբ մարդկության, նրանք էլ կաշխատեն կարելության չափ չափավորել գեղջիների խղճալի վիճակը»[23]։ Այս գրքույկում Տեր-Մելքիսեդեկյանը ոչ միայն դրսևորել է իր ատելությունը «քյասիբ» գյուղացիներին թալանողների հանդեպ, այլև պայքարի է կոչել «անիրավ բուրժուի» դեմ։

Քյասիբ գեղջի մինչև ե՞րբ պիտի դու
լինես ճնշված անիրավ բուրժուից.
մինչև ե՞րբ խաբող սլուկների
բերանք պիտի ծծեն քո սուրբ արյունից[24]։

Ռուս նարոդնիկների նման Գ. Տեր-Մելքիսեդեկյանը սոցիալ-քաղաքական կյանքի բարեփոխությունները համարում էր ապագայի գործ, չնայած Վ. Միրաքյանի վկայությամբ նա շատ հաճախ ոգևորված ասում էր. «Շատ երկար չի քաշիլ։ Կգա ժամանակ միապետական կառավարությունները կվերանան, ժողովրդական կառավարություններ կդառնան»[25]։

Տեր-Մելքիսեդեկյանը իր հրապարակախոսական հոդվածներում և շաբաթաթերթում քննադատել է 1861 թ. ճորտատիրական իրավունքը վերացնող ռեֆորմը. «Ճորտատիրական կարգերի վերացման օրենսդրությունը,— գրում է նա,— որ պետք է բերեր իրավունքների օրինական համահավասարություն, ունեցավ ամեն տեսակ թերություններ, այդ պատճառով էլ ճորտատիրական ճնշող հետքերը գեռ բոլորովին չեն վերացել հասարակական կյանքի վրայից...»[26]։

«Մշակի հարցի առթիվ» հոդվածում Տեր-Մելքիսեդեկյանը գրում է. «Ամեն աշխատանք, ինչպես ֆիզիկական կամ մտավոր զորության հայտնի

21 «Революционное народничество семидесятых годов XIX века», М., 1964, т. I, էջ 132։

22 Տե՛ս Գ. Տեր-Մելքիսեդեկյան, Նվեր քյասիբ գեղջիներին։

23 Նույն տեղում, էջ 45։

24 Նույն տեղում։

25 ԳԱԹ, Վ. Միրաքյանի ֆոնդ, գ. 180, էջ 69։

26 «Աշխատանք—Труд», 1880, № 5։

արդյունք, պիտի իր որքանության համաձայն վարձատրվի»[27]։ Նա առաջ էր քաշում մանրբուրժուական ծրագրեր, կտնում էր, որ պետք է կատարելագործել «գյուղական ասոցիացիաների» տնայնագործական, ժողովրդական արդյունաբերությունը, այնպես անել, որ Անդրկովկասի հումքը էժան գնով չվաճառվի եվրոպացիներին։

Տեր-Մելքիսեդեկյանը ժողովրդին ծանր դրությունից հանելու հիմնական ելքը տեսնում էր հողագործության մեջ։ «Այն կյանքի մեջ, անպատճառ կենդանարար սկիզբներ պետք է մտցնի, որը խիստ կարևոր բան է մեր ժողովրդի համար, որ կարոտ է իր փորն ապահովեցնելու նրան սպառնացող ընդհանուր սովատանջությունից ու թե տերության համար, որ իր ապրելու միջոցները ձեռք է բերում նույն իսկ ժողովրդից»[28]։ Այս միտքը որոշակիորեն լիցքավորված է Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունից։

1870—1879 թթ. Տեր-Մելքիսեդեկյանը իբրև նարոդնիկ-պրոպագանդիստ Սլիզավետպոլի նահանգում և Շուլավերում դառնում է «մշակ քյասիբ գեղջիների» շահերի պաշտպանը։ Սակայն դասակարգային այդ պայքարում նա պարտություն է կրում։

Նրա դեմ պայքարը առանձնապես սուր բնույթ է ստանում Շուլավերում (1876—1879)։ Այստեղ Տեր-Մելքիսեդեկյանը հանդում է այն ճիշտ եզրակացության, թե անհատ մարդկանց ջանքերով հաջողության չի կարելի հասնել, այլ պետք է ժողովրդին գաղափարապես հասունացնել և հանել ընդհանուր պայքարի։ «Մշակները աղքատ են, մշակներն իրենք են մեղավոր, որ կազմված լինելով ամբողջ միլիոնավոր հոգիներից, ապրում են ամեն մինը իր անձնական կյանքով, որտեղից և առաջանում է նրանց ներքին թուլությունը և չեն համախմբվում, միավորվում գործակից և համաժողով ընկերությունների տեսակով, որ չեն կազմում այդպիսով մեծ կենտրոնական մշտական ուժ, կարի նշանավոր իր գործնական հետևանքներով...»[29]։

Տեր-Մելքիսեդեկյանը Անդրկովկասի նարոդնիկների, այդ թվում և հայ նարոդնիկների նման ցանկանում էր Ռուսաստանում գոյություն ունեցող հողօգտագործման համայնական կարգը մտցնել նաև Անդրկովկասում ու ստեղծել «գյուղական ասոցիացիա», «ապրանքային պահեստներ», «հացի հասարակական խանութներ»՝ հավասարության սկզբունքով[30]։ Նա գյուղացիներին համոզում էր, որ նրանք միավորվեն, համայնական ձեռնարկումներ անցկացնեն գյուղում, գյուղատնտեսական մեքենաներ գնեն, կատարելագործեն երկրագործությունը, Եվրոպայի առաջավոր երկրների նման, նրանց օրինակով և այլն[31]։

Տեր-Մելքիսեդեկյանի գործունեությունը իր դեմ էր հանում գյուղի հարուստներին և հոգևորականներին, որոնք բազմաթիվ բողոքներ էին գրում նրա դեմ, անվանելով խռովարար, աթեիստ։ Նրանց հաջողվում է փակել տալ Շուլավերում Տեր-Մելքիսեդեկյանի հիմնած դպրոցը. «Ոստիկան պրիստավը քնած չէր. նա ընթացք տվեց իր մտերիմ աղալարների խնդրագրերին և տեղե-

27 Նույն տեղում, № 4։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում. 1881, № 7։

30 Տե՛ս З. Швелидзе, Содружество русских и грузинских революционных народников, «Вопросы истории», 1957, № 12, էջ 126։

31 Դ. Տեր-Մելքիսեդեկյան, Նվեր քյասիբ գեղջիներին, էջ 65։

կություն ուղարկեց գավառապետին՝ պրուդոնիստ Գրիգորի վնասակար քարոզների մասին։ Մի օր զինված մտան Երեմի դուքանը, դուրս հանեցին պրուդոնիստին (Գրիգորին), շորերը-մորերը շալակը տվին, գցեցին ձիերի առաջ և ոտով հասցրին Թիֆլիս...»[32]։

Տեր-Մելքիսեդեկյանը գիտակցում էր նաև իր գործունեության ու գործադրած մեթոդների թույլ կողմերը, այն, որ ինքը անուժ է գործնականում օգնելու գյուղացիությանը՝ գյուղը սոցիալական վերափոխման ենթարկելու։ «Հասարակաց գործը անաչառ քննության տակ ձգելով, մենք ատեցինք միանգամայն գեղջիներին անխղճմտանք կերպով հարստահարող, ծծող իշխաններին, անարժան հոգևորականներին»[33]։ Սակայն իր իսկ խոստովանությամբ «հարուստ հայերի և տեղական տերտերների շարունակ գրգռումից» ձախողվում էր նրա գործունեությունը գյուղում։

Տեր-Մելքիսեդեկյանը ձգտում էր պայքարի ավելի լայն ասպարեզի։ Իսկ դա կլիներ, նրա կարծիքով, դեմոկրատական մամուլի ստեղծման և հրատարակման միջոցով, որի համար էլ երկար տարիներ դիմում էր համապատասխան հիմնարկների։ Սակայն նրա երազանքը իրականացավ միայն 1879 թ. աշնանը։ Նա ստացավ թերթ հրատարակելու թույլտվություն։ Ժամանակակիցները պատմում են, որ նա ուրախությունից ցույց էր տալիս խմբագրական ինքը, ասելով. «Ես իմ վերջին հին սյուրտուկս ծախելով, քյասիբ գեղջիների և խեղճ աշխատավորների աշխատանքի իրավունքներն եմ պաշտպանելու իմ «Աշխատանք» թերթում ընդդեմ բոլոր ճնշողների, թշնամիների»[34]։

Տեր-Մելքիսեդեկյանը ռուս նարոդնիկների նման մտավորականությանը կարևոր դեր էր վերապահում և մեծ պահանջներ էր դնում նրանց կողմից ղեկավարվող առաջավոր մամուլի, թատրոնի, գրականության առջև։ Դեռևս 1878 թ. նա «Մեր հիմիկվան լրագրները» գրքույկում պարզաբանել է իր հայացքները Կովկասում եղած պարբերական մամուլի ուղղությունների վերաբերյալ, սուր քննադատության ենթարկելով իր ժամանակաշրջանի հայ հասարակական մտքի ինչպես պահպանողական-կղերական, այնպես էլ լիբերալ-բուրժուական ուղղությունները։ Մասնավորապես «Մեղու Հայաստանի» պարբերականի մասին գրում է. «Հին կարգերի պահպանումը կազմում էր նրա ոգին և իրենց փթած գոյության շարունակման գործնական միակ միջոցը— նա ավելի անշարժ է, քան Չինաստանի հայտնի պատերը»[35]։

Տեր-Մելքիսեդեկյանը քննադատում էր նաև «Մշակ» թերթի ուղղությունը։ Նա առաջ էր քաշում այնպիսի մամուլ ստեղծելու հարցը, որը հրապարակայնորեն կպահպաներ չքավոր գյուղացու, ժողովրդի իրավունքը «առանց երեսպաշտության, դիմակավորվածության»։ Գոյություն ունեցող պահպանողական լիբերալ մամուլի գործիչներին նա համարում էր ճարպիկ լարախաղացներ, որոնք հասարակության վրա ազդում են ավելի արտաքին փայլով, քան ներքին լուրջ արժանապատվությամբ։ «Տեր աստված, ինչքան տեսակ ճիճուներ կտեսնենք, որոնք թաք են կացած, բոլորն էլ հասարակաց արյունը ծծելու համար։ Ինչպես ճարպկությունով շինած սարքած է հասարակաց արյուն-

32 ԴԱԹ, Վ. Միրաքյանի ֆոնդ, դ. 183, էջ 25։

33 Դ. Տեր-Մելքիսեդեկյան, Նվեր քյասիբ գեղջիներին, էջ 22։

34 ԴԱԹ, Վ. Միրաքյանի ֆոնդ, դ. 180, էջ 67—68։

35 Դ. Տեր-Մելքիսեդեկյան, Մեր Կովկասի հիմիկվան լրագիրները։ Թիֆլիս, 1878, էջ 2։

ծծությունն, ինչպես, վերջապես դժվար և վտանգավոր բան է ճշմարտասեր գրչի համար տալ էդ բոլոր կեղտոտ տեսարանները, էնպես որ ցմթնացվի տպավորությունների և մեղադրանքների պարզությունն ու ամբողջությունը»[35].

Տեր-Մելքիսեդեկյանը 1880 թ. «Աշխատանք—Труд» թերթի «Մամուլի գործունեությունը» խորագրով առաջնորդողում գրում էր. «Ում կամ ինչ բանի մեղադրել, որ վաճառականությունը մեղանում անշարժ դրության մեջ է ընկած, որ միմիայն օտարներն են մեր բնական բերքերից օգուտ քաղում, որ գեղջիների աշխատանքը արդյունաբերող աշխատանք չէ, որ մշակների աշխատանքը քաղաքների մեջ բավականաչափ կերպով չի վարձատրվում, որ վարդապետ երիտասարդական հասակները դեռ շատ կանխաժամանակյա կերպով փոխարկվում, դառնում են հաղիվ-հաղ շարժվող կմախքներ, փաթաթված, գեղնացած մարմնակաշվով, որ աղնիվ հասարակական գործունեությունը մեռնում, անհետանում է մեղանում խիստ կանխաժամանակյա կերպով շատ անգամ դեռ իր սկզբնական սաղմի մեջ, որ կնոջ հասարակական դերը դեռ չի որոշված մեր մեջ, դեռ չի ստացած իր վերջնական սահմանադրությունը, որ մեղանում չկան առհասարակ այն վարդագեղ մանկավարժական սկզբունքները, որ մարդկանցից պատրաստում է ոչ թե անգերազանցապես շարժվող մեքենաների նմանություններ, այլ աշխարհի իսկական քաղաքացիներ՝ աղնիվ դաղափարներ ծնելու և նրանց ազատ մտածելու համար...»[37]։

Հրապարակախոսի այս մտքերը կասկած չեն հարուցում նրա արդեն լիբերալ-նարոդնիկական համոզմունքների նկատմամբ, թեև նրա ոչ բոլոր մտքերն ու հարցադրումներն են հստակ։ Ըստ Տեր-Մելքիսեդեկյանի, հասարակական առաջընթացի ուղին ուսման և գիտության ճանապարհն է. նա չի կարողանում տալ սոցիալական անհավասարության վերացման ճիշտ ուղին, չնայած իր առաջ քաշած համադեմոկրատական պահանջներին և միջոցառումներին։

«Թատրոնական հայացք» հոդվածում նա մեծ խնդիր է դնում թատրոնի առջև՝ պահանջելով այն ծառայեցնել ժողովրդի շահերին։ Թատրոնի միջոցով պետք է վեր հանվեն «ժողովրդի ցավերը, նեղությունները, ցավագար կողմերը, նրա հետ միասին՝ միջոցներ այդ ցավերը բժշկելու»։ Միայն այդ ժամանակ ժողովուրդը շուտ-շուտ թատրոն կգնա, «որովհետև հասարակությունը այն ժամանակ թատրոնի մեջ, ինչպես հայելիի մեջ պարզ ու ճարտարապետական կերպի կտեսնի իր բոլոր բարոյական ոչնչությունը ու խեղճության գլխավոր պատճառները»[38]։

Տեր-Մելքիսեդեկյանը պրոպագանդիստական աշխատանքի ժամանակ քարոզում էր այն միտքը, որ «եկեղեցի, աստված, կրոն, սուրբ, այդ բոլորը կվերանան. պետք է վերանա միապետությունը, դրամը և պետք է լինի ժողովրդական կառավարություն»[39]։

Նա առաջարկում էր գործնական գիտելիքներ տարածել ժողովրդի մեջ՝ քիմիա, ֆիզիկա, երկրագործություն, բժշկական տեղեկություններ և այլն[40]։

---

36 Նույն տեղում, էջ 5—9։

37 «Աշխատանք—Труд», 1880, № 5։

38 Նույն տեղում, № 2։

39 ԳԱԹ, Վ. Միրաքյանի ֆոնդ, գ. 180, էջ 118։

40 Գ. Տեր-Մելքիսեդեկյան, Մի համառոտ հայացք XIX դարի հայ հոգևորականության վրա, Թիֆլիս, 1884, էջ 13—15։

Գ. Տեր-Մելքիսեդեկյանի մոտ երևան են եկել նաև ռուսական նարոդնիկության բնորոշ սխալները։ Նա նույնպես հստակ պատկերացում չուներ հասարակության զարգացման օրենքների մասին։ Տեր-Մելքիսեդեկյանի հայացքները գոյություն ունեցող զանազան սիստեմների էկլեկտիկ մի խառնուրդ են։ Նա ռուս նարոդնիկների սուբյեկտիվ իդեալիզմից և պոզիտիվիզմից այն կողմ չանցավ։ Քաղաքատնտեսության մի շարք հարցերում նա տուրք է տվել բուրժուական գռեհիկ գաղափարախոսությանը, իսկ նրա սոցիալիզմը մնաց որպես լավ երազանք։

Վ. Ի. Լենինը, բնութագրելով նարոդնիկական սոցիալիզմը, գրել է. «Բրանանում Գերցենի այդ ուսմունքի մեջ, ինչպես նաև ռուսական ամբողջ նարոդնիկության մեջ ընդհուպ մինչև այժմյան «սոցիալիստ-հեղափոխականների» խունացած նարոդնիկությունը սոցիալիզմի նշույլ անգամ չկա։ Դա նույնպիսի բարեհոգի ֆրազ է, նույնպիսի բարի երազանք, որը զգեստավորում է բուրժուական գյուղացիական դեմոկրատիայի հեղափոխությունը Ռուսաստանում...»[41]։

Մելքիսեդեկյանին խորթ էր նաև ազգային սահմանափակվածությունը. «Ես մարդ եմ, ապրում եմ մարդկության համար»,— ասում էր նա և իր գործունեության ընթացքում քարոզում էր ազգերի համերաշխություն. «Իմ ուսումնարանը կընդունի իր մեջ ամեն դասակարգի, ամեն ազգի որդիք, որովհետև բոլորս էլ հընկերներ ենք, որ պետք է հընկերական կյանքի մեջ մանք, փնտրենք մեր ուրախությունը»[42]։

Հայ ժողովրդի ազգային ազատագրության հարցը, որ հանդիսանում էր հայ նարոդնիկների գործունեության առանձնահատկություններից մեկը, զբաղեցրել է նաև Տեր-Մելքիսեդեկյանին։ Նա գտնում էր, որ ազատություն պետք է ձեռք բերել զենքի ուժով[43]։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Սան-Ստեֆանոյի դաշնագիրը և այլ միջազգային իրադարձություններ վերլուծելիս, հրապարակախոսը ննջագատում է սուլթանական Թուրքիայի և Արևմտյան Եվրոպայի դիվանագիտությունը, կոնկրետ օրինակներով բացահայտում Արևմտյան Եվրոպայի երկրների և հատկապես Անգլիայի կեղծ քաղաքականությունը, որը «իբրև հանդես է գալիս հանուն մարդկության մեծ ընտանիքի շահերի և քաղաքակրթության, նոր ճանապարհ է ցույց տալիս մարդկությանը, այնին, ամեն մի քայլում թող է փչում մեր աչքերին»[44]։

Տեր-Մելքիսեդեկյանը, ինչպես շատ նարոդնիկներ, իր գործունեության վերջին շրջանում հարեց լիբերալ հոսանքներին և ապրեց գաղափարական վայրէջք, որի վրա քիչ ներգործություն չունեցան նարոդովոլցիների կրախը, ինչպես նաև այն ծանր պայմանները, որ ստեղծվել էին մարտիմեկյան դեպքերից հետո, հատկապես թերթի հրատարակության դեմ գրաքննության հարուցած արգելքները։ «Աշխատանք—Труд» պարբերականը 1882 թ. մայիսի 5-ի վերջին համարում հայտարարում էր. «Ցավոք պիտի խոստովանեմ, որ անդրկովկասյան մամուլը չի վայելում լիապես արտոնությունից և իրավունքներից, որոնց տալիս է տպագրական գործի մասին սահմանված օրենքը։

41 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, Երևան, 1979, էջ 318։
42 Գ. Տեր-Մելքիսեդեկյան, Նվեր քյասիր գեղջիներին, էջ 34—35։
43 «Աշխատանք—Труд», 1879, № 1։
44 Նույն տեղում, 1881, № 1։

Ամբողջ մամուլը փախչում էր գաղափարից, մտքից և զբաղվում առածներով, փոխադարձ հաճոյախոսություններով կամ, վերջապես, հայտարարություններ անելով։ Խմբագիրները, գրաքննական մասնաժողովի գանգատով, շատ անգամ նստում էին մեղադրյալների դատաստանական նստարանի վրա»[45]։ Այնուամենայնիվ Տեր-Մելքիսեդեկյանը չէր կարող լռության մատնել մարտիմեկյան դեպքերը։ 1881 թ. ապրիլի 6-ին «Աշխատանք» շաբաթաթերթում «Հեռագրալուրեր» խորագրով առաջնորդողում նա տալիս է նարոդովոլցիների դատավարության ընթացքը (մարտի 26, 28, 29) և դատավճիռը. այստեղ չկա մեկնաբանություն։ Նա հանդես է գալիս սոսկ արձանագրողի դերում, իսկ նույն թվականի «Աշխատանք—Труд»-ի դարձյալ ապրիլի 6-ի և մայիսի 2-ի համարներում արդեն մեկնաբանում է դեպքերը։ Հրապարակախոսը դատապարտում էր նարոդովոլցիների տեռորի տակտիկան, իսկ մյուս կողմից՝ մեղադրում ինքնակալությանը, չնայած հեղափոխական շարժումներն անվանում էր «վտանգավոր խոցեր»[46]։

Հանդես գալով որպես լիբերալ, Տեր-Մելքիսեդեկյանը արդարացնում է Ալեքսանդր II-ի բուրժուական ռեֆորմները. «Արդյո՞ք միապետներից որևէ մեկը ի վիճակի էր այդքան կարճ ժամանակամիջոցում ավելին անել։ Արդյո՞ք հնարավոր է, ով էլ նա լինի, միանգամից կախարդանքով խարխլել ռուս ժողովրդի մեջ հարյուրամյակների ընթացքում կուտակված նախապաշարմունքները»[47]։ Նույն հոդվածում պատասխանելով «Голос»-ի 69-րդ համարում՝ միջազգային իրավունքի գիտության ներկայացուցիչ Մարտենսի առաջադրած միջոցառումներին, որով նա պահանջում էր «պետական հանցագործներին» միջազգային մասշտաբով զրկել ապաստարանից, «Աշխատանք—Труд»-ը առարկում է, ասելով. «Ռուսաստանում հեղափոխությունը բոլորովին էլ միջազգային չէ, այլ այն Ռուսաստանի համար պետական-սոցիալական հարց է և այն պետք է լուծվի պետական, սոցիալական եղանակով»[48]։

Տեր-Մելքիսեդեկյանը հանդես է գալիս որպես ռեֆորմների կողմնակից։ Նրա առաջադրած պահանջներն էին. ընդարձակել տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցը։ Մեռած կլասիկ լեզուների փոխարեն մտցնել ռեալ տեխնիկական գիտություններ։ Դատարանը անկախացնել պետությունից։ Օրենսդրքերը վերանայել ժողովրդի պահանջներին համապատասխան։ Խրախուսել ժողովրդի ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը։ Արդյունաբերությունը, հողագործությունը, արվեստը կազմակերպել գիտական նորությունների հիման վրա։ Պահպանել արդար աշխատանքի իրավունքը։ Սահմանել խոսքի և մամուլի վրա ռեալ հսկողություն։ Վերջ տալ չինովնիկների չարաշահումներին, նրանց մի մասին փոխարինել նոր, գործունյա աշխատողներով և այլն[49]։ Ահա այն բարեփոխությունները, որոնցով նա խորհուրդ էր տալիս ազատել Ռուսաստանը վերահաս հեղափոխությունից։ Այստեղ որոշակիորեն զգացվում է լիբերալիզմի շունչը և այն վերասիրումը, որ ապրել է Գ. Տեր-Մելքիսեդեկյանը։ 1882 թ. մայիսի 2-ի

45 Նույն տեղում, 1882, № 1։
46 Նույն տեղում, 1881, № 1։
47 Նույն տեղում։
48 Նույն տեղում։
49 Նույն տեղում, № 2։

«Աշխատանք—Труд»-ի վերջին համարում նման մի շարք սոցիալ-տնտեսական բարեփոխությունների պահանջ է դրվում նաև Անդրկովկասի համար։

Վ. Ի. Լենինը հեղափոխական նարոդնիկությունից դեպի լիբերալիզմն անցման էությունն է նկատի ունեցել, երբ գրել է. «Քաղաքական մի ծրագրից, որ նպատակ ուներ ոտքի հանել գյուղացիությունը սոցիալիստական հեղափոխություն կատարելու ընդդեմ ժամանակակից հասարակության հիմքերի, ծնվեց մի ծրագիր, որի նպատակն է կարկատել, «քարելավել» գյուղացիության դրությունը՝ պահպանելով ժամանակակից հասարակության հիմքերը»[50], Վ. Ի. Լենինի այս միտքը վերաբերում է նաև Գ. Տեր-Մելքիսեդեկյանին։

К ВОПРОСУ О НАРОДНИЧЕСКИХ ВЗГЛЯДАХ ГРИГОРА ТЕР-МЕЛКИСЕДЕКЯНА

Г. Г. ГЕВОНДЯН

(Резюме)

Одним из видных участников закавказского народнического движения был педагог и публицист Григор Тер-Мелкиседекян. Он призывал крестьянство к социальной борьбе, стремился с помощью крестьянской общины создать народное государство, упразднить частную собственность, преградить капитализму путь в армянскую и грузинскую деревню. Однако в последние годы жизни Тер-Мелкиседекян, как и многие русские народники, отрекся от пропаганды политической борьбы и стал либералом, сторонником реформ.

---

50 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, Երևան, 1974, էջ 327—328։